ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Միասնական սոցիալական ծառայությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար անվտանգության ապահովման ծառայություններ գնման նպատակով կազմակերպված ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-25/5 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024թ. դեկտեմբերի 3-ին կնքված N ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-25/5-1 պայմանագրում 2025 թվականի հունվարի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ N 1** Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

**Փոփոխության նկարագրություն N 1:** Կողմերը որոշեցին Պայմանագրի 7.15 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը:

**Փոփոխության հիմնավորում: N 1:** Գնումների մասին օրենսդրության և Պայմանագրի 7.5 և 7.15 կետերի համաձայն:

Պատվիրատու՝ ***Միասնական սոցիալական ծառայություն***

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**2024թ. դեկտեմբերի 3-ին կնքված N ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-25/5-1 գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան «20» «01» 2025թ.

Միասնական սոցիալական ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Ա. Աղաբաբյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Սողոմոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 03.12.2024թ. կնքված N ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-25/5-1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.Կողմերը որոշեցին՝

Պայմանագրի 7.15 կետին համապատասխան հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (հավելված N 3)՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների մատուցման Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Միասնական սոցիալական ծառայություն | «Սուր և Նիզակ» ՍՊԸ |
| Ք. Երևան, Նալբանդյան 13 | ՀՀ,ք.Երևան, Գրողների 18 |
| ՀՎՀՀ 02505511 | ՀՎՀՀ 00494673 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011556355 | Հ/Հ 1150001664764734 |
| | Տնօրեն Կ. Սողոմոնյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 1*
*« 03» «դեկտեմբերի» 2024թ. կնքված*
*N ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-25/5-1 գնման պայմանագրի հիման վրա*
*«20» «01» 2025թ. կնքված համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| *Ծառայության* | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *հրավերով նախատեսված չափաբաժնի համարը* | *գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)* | *անվանումը* | *դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | *հունվար* | *փետրվար* | *մարտ* | *ապրիլ* | *մայիս* | *հունիս* | *հուլիս* | *օգոստոս* | *սեպտեմբեր* | *հոկտեմբեր* | *նոյեմբեր* | *դեկտեմբեր* | *ԸՆԴԱՄԵՆԸ* |
| *1* | 98111121/501 | անվտանգության ապահովման ծառայություններ | 1620000 | 1620000 | 1620000 | 3240000 | 3240000 | 3240000 | 4860000 | 4860000 | 4860000 | 6480000 | 6480000 | 6480000 | 6480000 |
| *2* | 98111121/502 | անվտանգության ապահովման ծառայություններ | 540000 | 540000 | 540000 | 1080000 | 1080000 | 1080000 | 1620000 | 1620000 | 1620000 | 2160000 | 2160000 | 2160000 | 2160000 |

***Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Միասնական սոցիալական ծառայություն
Ք. Երևան, Նալբանդյան 13
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011556355

-------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Սուր և Նիզակ» ՍՊԸ
ՀՀ,ք.Երևան, Գրողների 18
ՀՎՀՀ 00494673
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150001664764734
Տնօրեն Կ. Սողոմոնյան

-------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.